

01. 06. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոսյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս. Խալաթյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա.Չատինյանը - ԱԻՆ, Լոռու մարզային վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց ՝

1. Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Վ.Ասատրյանին, Տ. Բաղդոսյանին, ՏԻ և ՀԳՍ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել տարածաշրջանային զինկոմիսարիատների և մարզի համայնքների ղեկավարների հետ կցագրման աշխատանքները ժամանակին և պատշաճ կարգով կատարելու ուղղությամբ:

2. Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Մարզի համայնքների հետ կապված ցանկացած խնդիրների լուծման առաջարկությունները և տեղեկատվությունը՝ կապված դրանց կատարմանը և ժամկետներին, ներկայացնել մարզպետի տեղակալներին:

3. Մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Ամբողջական տեղակատվություն հավաքագրել և ներկայացնել Միջազգային կազմակերպությունների և անհատ ներդրողների կողմից համայնքներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

4. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Երկօրյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն վերջին 3 տարիների ընթացքում մարզում իրականացված գարնանացանի վերաբերյալ:

5. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝

Վանաձորի քաղաքապետի և շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկել և 10-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ համահայկական խաղերի Վանաձոր քաղաքում պատշաճ կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

6. Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Լ.Բերոյանին՝

Շրջաբերական ուղարկել մարզի համայնքների ղեկավարներին և հանրային հատվածի բոլոր կազմակերպություններին՝ հաշվապահական հաշվառման օրենսդրական փոփոխություններով պայմանավորված պահանջների կատարման վերաբերյալ:

/ժամկետ՝ 2 օր/

7. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ղեկավարների կողմից վարձակալության պայմանագրերի կնքման և վարձավճարների գանձման ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան  
Հեռ. 0322/4- 32- 99/